ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

23.06.2012թ.
175-ի 3

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ պարոն Կարեն Խտրյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Խտրյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները:

1. Ստացե՞լ են արդյոք պարգեւատրումներ (պարգեւավճարներ, նվերներ) Իրավական ակտերի փորձաքննության գործակալության աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարգեւատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել Իրավական ակտերի փորձաքննության գործակալության աշխատակիցների ստացած դրամական պարգեւատրումների ընդհանուր գումարը,
4. Որքա՞ն է կազմել Իրավական ակտերի փորձաքննության գործակալության աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

Սակայն, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստացել է թերի պատասխան, քանի որ չեն տրամադրվել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի խնդրած՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալության՝ պարգևատրում ստացած աշխատակիցների եւ յուրաքանչյուրի ստացած դրամական պարգևատրումների չափի մասին տեղեկությունները (2-րդ եւ 3-րդ հարցերի պատասխանները):

Նշենք, որ ԻԱԿ-ը խնդրել է պարգեւատրում ստացած աշխատակիցների մասին տեղեկություն ըստ հաստիքների, այսինքն, ոչ անվանական: Բացի այդ, ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի գրության համաձայն՝ քաղաքացիական ծառայողների ստացած պարգեւատրումների արժեքի մասին տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ չկան: Վերոնշյալ 2 պայմանների համակցությունը ցույց է տալիս, որ խնդրվող տեղեկությունը չի վերաբերում անհատական քաղաքացիական ծառայողի անձնական կյանքի անձեռնմխելիությանը:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել բաց թողնված վերոնշյալ տեղեկությունները: Կից ներկայացնում եմ ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի գրության պատճենը:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան